ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏ

Մամուլի հաղորդագրություն

Երևան, 7 օգոստոսի 2023թ.

Հաշվեքննվել է 2023թ. պետբյուջեի առաջին եռամսյակի կատարումը

Հաշվեքննիչ պալատի 2023թ. հուլիսի 27-ի նիստում հաստատվեցին ՀՀ 2023թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքները:

Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է հանրային միջոցների օգտագործման օրինականության ապահովմանը միտված 33 առաջարկություն: Վերջիններիս համատեքստում կարևորվել է բյուջետային միջոցներից ֆինանսավորվող մի շարք ծառայությունների գնահաշվարկի գործընթացը գործող իրավակարգավորումների պահանջներին համապատասխանեցնելը: Մասնավորապես, հաշվեքննությունների արդյունքում ընդգծվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման, հանրակրթական, ինչպես նաև սուբսիդավորվող ոռոգման ծառայությունների գնագոյացման գործընթացի բարելավման անհրաժեշտությունը: Ուշադրություն է հրավիրվել նաև սուբսիդավորվող ծառայությունների առնչությամբ ռիսկերի կառավարման անհրաժեշտ գործոն հանդիսացող՝ բյուջետային ծրագրերը կատարող գերատեսչությունների կողմից մոնիթորինգի գործառույթի իրականացման կարողությունների ձևավորման վրա, ինչպես օրինակ՝ գյուղատնտեսության և ջրային տնտեսության ոլորտներում:

Նաև վերահաստատվել է նախորդ տարվա պետական բյուջեի կատարման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի կողմից համակարգային գնահատված և ըստ այդմ

Սույն մամուլի հաղորդագրության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ 2023թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների հիմնական ուղերձները:

Ընթացիկ եզրակացությունների ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ armsai.am/hy/current-conclusions:

Հաշվեքննիչ պալատ
Երևան, Բաղրամյան 19 secretariat@armsai.am armsai.am

ձևակերպված առաջարկությունը՝ կապված հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառումը ստանդարտների (ՀՀՀՀՍ) հիման վրա, համակարգչային ծրագրերի կիրառությամբ, վարելու գործընթացը ողջամիտ ժամկետում իրականացնելու և հետագա հետաձգումները կանխելու հետ:

Միևնույն ժամանակ, առանձին հաշվեքննությունների արդյունքների ամփոփմամբ կրկին արձանագրվել են անհրաժեշտ տեղեկատվությանը հասանելիության սահմանափակումների խնդիրներ: Առանձին դեպքերում հաշվեքննության ենթակա մարմինների կողմից մերժվել է տեղեկատվության տրամադրումը՝ վերջիններս անձնական տվյալներ, բանկային, առևտրային և այլ գաղտնիք պարունակելու պատճառաբանությամբ: Տեղ են գտել նաև տեղեկատվությունն օրենքով սահմանված ժամկետից ուշ կամ ոչ ամբողջական տրամադրելու դեպքեր:

Նկատի ունենալով, որ հաշվեքննություն իրականացնելու համար բավարար տեղեկատվություն ստանալու անհնարինությունը կարող է հանգեցնել պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ օրենքով նախատեսված կարծիքների տեսակներից «Ոչ լիարժեք» կամ «Հրաժարում» եզրահանգում ներկայացնելու ռիսկի, Հաշվեքննիչ պալատը քննարկում է տեղեկատվությանը հասանելիության խնդրի լուծման ուղիները գործընկեր պետական մարմինների հետ:

Հրապարակման ենթակա բոլոր որոշումներին հնարավոր է ծանոթանալ **այս հղմամբ**:

* * *

Սույն մամուլի հաղորդագրության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ 2023թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների հիմնական ուղերձները:

Ընթացիկ եզրակացությունների ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ armsai.am/hy/current-conclusions:

Հաշվեքննիչ պալատ

Երևան, Բաղրամյան 19 secretariat@armsai.am armsai.am

Ծանոթագրություն

2023թ. առաջին եռամսյակի ընթացքում պետական բյուջեի ծախսերը կազմել են 422.7 մլրդ դրամ՝ կատարվելով նախատեսվածի 76.5%-ի չափով: Հաշվեքննության ենթարկված պետական մարմիններին բաժին է ընկել հաշվետու ժամանակաշրջանի բյուջետային ծախսերի 85.4%-ը: Հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել է 43 անհամապատասխանություն և 3 խեղաթյուրում:

Խեղաթյուրումը՝ ֆինանսական հաշվետվությունում ներկայացված հոդվածի գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման և ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքների պահանջներին համապատասխան լինելու համար պահանջվող հոդվածի գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման միջև տարբերությունն է:

Անհամապատասխանությունը՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին ոչ համապատասխան կերպով պետական բյուջեի միջոցները, ստացած փոխառություններն ու վարկերը, պետական սեփականությունը օգտագործած լինելու դեպքն է:

Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատը հաշվեքննում է պետական բյուջեի կատարումը՝ գնահատելով վերջինիս արդյունքում կազմված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը և ֆինանսական գործարքների համապատասխանությունը կիրառելի իրավապայմանագրային պահանջներին: Պետական բյուջեի կատարման երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների հիմնական նպատակն է՝ ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որպեսզի հնարավոր լինի կարծիք արտահայտել պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության արժանահավատության վերաբերյալ:

Հաշվեքննիչ պալատը ներկայացվող կարծիքի շրջանակներում արտահայտում է «Դրական» եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել: Հաշվեքննիչ պալատը ձևափոխում է իր կարծիքը՝ արտահայտելով «Ոչ լիարժեք» կամ «Բացասական» եզրահանգում՝ կախված հայտնաբերված խեղաթյուրումների էականության և համատարածության, ինչպես նաև ստացված տեղեկատվության բավարար լինելու գործոնների ազդեցությունից:

Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետության անկախ բարձրագույն հաշվեքննիչ (աուդիտորական) մարմինն է: Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության և հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար հանրությանն ու Ազգային ժողովին է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ:

Սույն մամուլի հաղորդագրության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ 2023թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների հիմնական ուղերձները:

Ընթացիկ եզրակացությունների ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ armsai.am/hy/current-conclusions:

Հաշվեքննիչ պալատ

Երևան, Բաղրամյան 19 secretariat@armsai.am armsai.am